ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2018 թ.
№ 15 (1032)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՏՈՆԴ, ՈՒՍԱՆՈ՛Ղ

Ուսանողների համաշխարհային կոնգրեսը նոյեմբերի 17-ը հռչակել է որպես Ուսանողների միջազգային օր

Հայաստանի ուսանողները մեծ ակտիվությամբ նշում են Ուսանողների միջազգային օրը:

Մանկավարժական համալսարանի ուսանողների առօրյան հետաքրքիր ու հագեցած է: Ավանդական դարձած բազմաբնույթ միջոցառումների շարքում մեծ մասսայականություն է վայելում «Ամառային դպրոց»-ի և «Լավագույն ուսանող» մրցույթի կազմակերպումը: Բուհը համագործակցում է միջազգային առաջատար այլ բուհերի հետ, տարբեր ծրագրերի միջոցով պարբերաբար կազմակերպվում են ուսանողների փոխանակումներ:

Օրվա առթիվ շնորհավորում ենք Մանկավարժական համալսարանի և բոլոր ուսումնական հաստատությունների ուսանողներին: Մաղթում ենք բոլորին մեծ հաջողություններ ուսման մեջ և կյանքում:

Շնորհավո՛ր տոնդ, ուսանո՛ղ:

ԴԵՍՊԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանում ՌԴ դեսպան Սերգեյ Պավլովիչ Կապիրկինը նոյեմբերի 14-ին այցելեց Մանկավարժական համալսարան: Նրա հետ էին «Ռոսստրուդնիչեստվոյի» ղեկավարը, դեսպանության ներկայացուցիչներ:

Հյուրերը եղան բուհի թան- ➤2

ՄԵՐ ՓՈՐՁՆ ՈՒՍԱՆԵԼԻ Է ԵՎ ՀԵՏԱՔՐՔԻՐ

Մանկավարժական համալսարանը հայտնի է Շախմատի ինստիտուտով, որտեղ ուսումնասիրություններ են կատարում բուհի հոգեբանները և սոցիոլոգները՝ պարզելու շախմատի բարոյահոգեբանական ազդեցությունը աշակերտների վրա, ինչպես նաև դասավանդման արդյունավետությունը:

Նոյեմբերի 6-ին ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ընդունեց հերթական պատվիրակությանը՝ Ուզբեկստանի Կրթության և գիտության նախարարության և Շախմատի ֆեդերացիայի ներկայացուցիչներին՝ Խամուտով Ուչկուն Իրիսվակիչին, Սաբիրով Ֆարխադ Շավկատովիչին, Բայմուրատովա Սևարա Նեմատ Կիզին, Խայլաև Մամատկուլ Ժումակիչին, ինչպես նաև շախմատի կրթության հարցերով ազգային խորհրդական Ջերրի Նեշին, ով աշխատում է ԱՄՆ-ի մանկավարժների հետ՝ շախմատի դրական ազդեցությունը դասասենյակում կիրառելու նպատակով: Նա Ալաբամա նահանգում իրականացվող «Շախմատը դպրոցում» նախաձեռնության հիմնադիրն է, ինչպես նաև վարում է այդ նախաձեռնության կողմից իրականացվող վերապատրաստում- ➤3

ՍՄԲԱՏ ԼՊՈՒՏՅԱՆԸ՝ ՖԻԴԵ-Ի ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՊՄՀ շախմատի և սպորտի ամբիոնի վարիչ, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր Սմբատ Լպուտյանը նշանակվել է ՖԻԴԵ-ի «Շախմատը կրթական համակարգում» հանձնաժողովի նախագահ:

ԴԵՍՊԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

➢1 գարանում, ծանոթացան պատմությանն ու ժամանակագրությանը, հանդիպեցին բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ:

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ողջունեց դեսպանին մանկավարժական մայր բուհում հյուրընկալվելու առթիվ և մաղթեց արդյունավետ գործունեություն: Համալսարանի ղեկավարը հույս հայտնեց, որ երկու երկրների հարաբերությունները կամրապնդվեն և կունենան լավ արդյունքներ:

«Մենք մեծ պատասխանատվությամբ ենք վերաբերվում վերապատրաստումներին: Կա մի առանձնահատկություն, որ ՀՊՄՀ-ի դիմորդների շուրջ 75 %-ը մարզերից են և, ավարտելով բուհը, նրանք վերադառնում են և դասավանդում այդ տարածքների դպրոցներում:

Ռուսական բուհերի հետ համագործակցությունը մեզ համար ունի կարևոր նշանակություն՝ հատկապես ռուսաց լեզվի դասավանդման որակը բարելավելու տեսանկյունից»,-ասաց ռեկտորը՝ ընդգծելով, որ գործնական և արդյունավետ հարաբերություններ են հաստատվել ռուսական մի շարք հաստատությունների հետ:

Ռուբեն Միրզախանյանն անդրադարձավ նաև «Ամառային դպրոց» միջազգային ծրագրին, որի շրջանակներում վերոնշյալ համալսարանների հետ իրականացվել է ուսանողների փոխանակում:

«Ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպումից առաջ ես այցելեցի համալսարանի թանգարան: Ուրախ եմ, որ այնտեղ տեսա անցյալը՝ պատմական բովանդակությամբ, այստեղ տեսանելի է դասավանդողների մեծ ավանդը կրթության գործում դեռ խորհրդային տարիներին և հայ-ռուսական փոխգործակցությունը: Շնորհակալ եմ, որ մեր համատեղ անցած ճանապարհի պատմությունը պահպանում եք ձեր թանգարանում:

Մենք ապրում ենք նոր իրականությունում՝ որպես Անկախ պետությունների համագործակցության երկրների ընտանիքի անդամ, ուստի գործակցության նոր ուղղությունների ու հնարավորությունների ճանապարհով երկուստեք ներկայացնում ենք միմյանց հետաքրքրություններն ու շահերը, փորձում հաջողությամբ համագործակցել»,-ասաց դեսպանը:

Ես այցելել եմ Հայաստանի մի շարք բուհեր և դպրոցներ, ուր լսել եմ բազմաթիվ մտահոգությունների մասին: Խնդիրները շատ են, սակայն պրակտիկան ցույց է տվել, որ արդյունավետ համագործակցելու պայմաններում դրանք լուծելի են և ցանկության դեպքում կարելի է հասնել արդյունքների: Պետք է որոնել խնդիրների լուծման նոր մեխանիզմներ և ուղիներ:

Ես կարծում եմ դեսպանի իմ առաքելությունն է աջակցել ձեզ և ձեզ հետ միասին պահպանել այն, ինչ ձեռք ենք բերել երկու երկրների համատեղ անցած ճանապարհի ընթացքում:

Ներկայացվեց ERASMUS+ BOOST ծրագրի ընթացքը

Մանկավարժական համալսարանի ռեկտորատի նիստում ներկայացվեց ERASMUS+ BOOST՝ հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքետինգի խթանում ծրագրի ընթացքը:

Ծրագիրը, որի համակարգողը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն է, նպատակ ունի նպաստել և խրախուսել ՀՀ բարձրագույն կրթության հետագա միջազգայնացումը՝ մշակելով ազգային և ինստիտուցիոնալ քաղաքականության համապատասխան շրջանակ և գործիքակազմ:

Ռեկտորատի անդամները ծանոթացան ծրագրի խնդիրներին, ինչպես նաև մինչ օրս կատարված աշխատանքներին, մասնավորապես՝ ուսումնասիրվել է բարձրագույն կրթության միջազգայնացման եվրոպական և հայաստանյան բուհերի փորձը, առկա ռեսուրսները և խոչընդոտները, քննարկվել և առանձնացվել են ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման խնդիրները, մշակվել ՀՀ բուհերի միջազգայնացման համար բենչմարքինգի ցուցիչները:

Ծրագրի շրջանակներում բարելավվել են համալսարանների միջազգայնացման ռազմավարական ծրագրերը, հավաքագրվել ՀՀ և ԵՄ մասնակից բուհերի միջազգայնացման լավագույն փորձը:

Բուհի միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Մարիանա Հարությունյանը ռեկտորատի անդամներին ներկայացրեց նաև ծրագրի շրջանակներում նախատեսված անելիքները՝ առանձնացնելով ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման համար ազգային հարթակի մշակումն ու բենչմարքինգի ցուցիչների ինտեգրումը, հայաստանյան մասնակից բուհերի միջազգային համագործակցության բաժինների ստեղծումը, աշխատանքների բարելավումը՝ գործառույթների սահմանման և անհրաժեշտ ընթացակարգերի մշակման և ներդրման միջոցով: Մարիանա Հարությունյանն առաջիկա անելիքներում կարևորեց նաև մասնակից հաստատությունների կարողությունների զարգացումը, այլ բուհերի միջև փորձի տարածումն ու ինստիտուցիոնալ մարքեթինգային ռազմավարությունների մշակումը:

Նշենք, որ ERASMUS+ BOOST ծրագրի հայաստանյան գործընկերներն են Հայաստանի ամերիկյան, Շիրակի պետական, Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանները, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, Կրթության և գիտության նախարարությունը, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ընդունեց Եվրոմիության, կրթության և մշակույթի Բրյուսելյան գործադիր գործակալության ծրագրերի պատասխանատու Բելեն Էնկիսոյին, Էրազմուս+ ծրագրի հայաստանյան գրասենյակի համակարգող Լանա Կառլովային և նույն գրասենյակի մասնագետ Էդիթ Սողոմոնյանին:

Ռեկտորն իր գոհունակությունը հայտնեց ծրագրի համակարգումը Մանկավարժական համալսարանին վստահելու համար և ընդգծեց, որ բուհը ծայրաստիճան կարևորում է ծրագրի բովանդակությունը: Նա նշեց, որ բուհական համակարգի, մասնավորապես՝ ՀՊՄՀ-ի զարգացման համար կա երկու կարևոր հանգամանք՝ հաստատությունը հետազոտական ինստիտուտ դարձնելն ու բուհերի միջազգայնացումը, որը բարձրագույն կրթության զարգացման գերխնդիրն է:

«Ծրագիրն արդիական է և հետաքրքրություն է ներկայացնում մեր երկրի ողջ կրթական համակարգի համար: Մեր բուհն այդ ուղղությամբ որոշակի հաջողություններ և առաջընթաց ունի. միջազգայնացման ուղղությամբ եղել են որոշ ծրագրեր, որոնց համակարգողը ևս եղել է Մանկավարժական համալսարանը»,-նշեց ռեկտորն ու հավելեց, որ առաջնորդվելով ձեռքբերումներն ավելացնելու սկզբունքով, բուհը կարևորում է ծրագրի շրջանակներում ընդհանուր հարթակի ստեղծումը, կոնֆերանսների անցկացումը, որոնց ընթացքում ձեռք են բերվում կոնկրետ պայմանավորվածություններ և ձեռնարկվում գործնական քայլեր: Խոսելով միջազգային ծրագրի համակարգող լինելու փորձից՝ ռեկտորն առանձնացրեց արդյունքները, մասնավորապես՝ մագիստրոսական կրթության համակարգում «Կրթության կառավարում մասնագիտության ներդրումը»:

Հյուրերը շնորհակալություն հայտնեցին ընդունելության համար և կարևորեցին ՀՊՄՀ-ի մասնակցությունը միջազգային տարբեր ծրագրերին: Հայաստանում էրազմուս + ծրագրի հայաստանյան գրասենյակի համակարգող Լ. Կառլովան ևս բարձր գնահատելով Մանկավարժական համալսարանի հետ համագործակցությունը՝ հույս հայտնեց՝ համագործակցության այն ցանցը, որ ակնկալվում է ստեղծել, կլինի արդյունավետ:

Բելեն Էնկիսոնն ընդգծեց, որ Հայաստանից շատ են ծրագրին դիմողները և հավելեց՝ Մանկավարժական համալսարանը լուրջ է մոտենում, ինչով պայմանավորված էլ նա ծրագրի հաջող համակարգողն է. «Հաշվի առնելով ՀՊՄՀ կառուցողական մոտեցումն ու արդյունավետ համակարգումը՝ կխրախուսեինք, որ դիմեիք նաև այլ համանման ծրագրերի: Մանկավարժական համալսարանի մասնակցությունն ու ծրագրերի համակարգումը հիանալի և հաջողված փորձ է»,- հավելեց Բելեն Էնկիսոնը:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՄԵՐ ՓՈՐՁՆ...

➢1 ները: Նա հյուրերին ներկայացրեց Մանկավարժական համալսարանի գործունեությունը, առաջնահերթությունները, ընդգծեց, որ բուհն իր ուսանողների թվով հանրապետությունում երկրորդն է:

«Մեր երկիրն առաջինն է, ուր շախմատը դպրոցում պարտադիր առարկա է, դրանով էր մեծապես պայմանավորված Շախմատի ինստիտուտի բացումը Մանկավարժական համալսարանում, ուր հետևողական հետազոտական աշխատանք են կատարում բուհի տարբեր մասնագիտությունների ուսանողներ՝ մեթոդիստներ, հոգեբաններ, սոցաշխատողներ»,-ընդգծեց ռեկտորը՝ հավելելով, որ ինստիտուտում հետևողական աշխատանքներ են տարվել լաբորատորիայի ստեղծումից մինչև ինստիտուտի բացում:

Ռեկտորը հյուրերին հպարտորեն ներկայացրեց, որ շախմատի դասավանդումը մեր երկրի կրթական բրենդն է, և որ դասավանդման ոլորտում մենք առաջնորդող ենք: Պարբերաբար անցկացվող գիտաժողովներն էլ դառնում են փորձի փոխանակման լավագույն հարթակ՝ առավել ընդգրկուն ու հետաքրքիր դարձնելով շախմատի ուսուցման ու դասավանդման մեր փորձն ու հաջողությունները:

Գիտության գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը հանգամանորեն ներկայացրեց բուհում շախմատի ուղղության զարգացման ընթացքը և ձեռքբերումները, ուսումնասիրությունների վերլուծման համար կիրառվող մեթոդներն ու մեխանիզմները:

Երկուստեք ծավալվեց գործնական խոսակցություն:

Հյուրերը նախ փորձեցին հասկանալ՝ շախմատը գիտությո՞ւն է, սպո՞րտ, թե՞ արվեստ, ապա իրենք էլ պատասխանեցին՝ բոլորը միասին վերցրած՝ խելքի, գեղեցկության, մտքի վարժանքի միասնություն: Նրանք իրենց հիացմունքն արտահայտեցին մեր երկրում իմաստուն խաղի դասավանդման վերաբերյալ, ապա այցելեցին Շախմատի ինստիտուտ և տեղում առավել հանգամանորեն ծանոթացան գործունեությանը: Նրանք հետաքրքվեցին տվյալների վերլուծությամբ, կիրառման մեթոդներով ու մեխանիզմներով, իրականացված սոցիոլոգիական հարցումներով, առաջիկա աշխատանքների տեսլականով:

Օրեցօր ավելի քան պարզ է դառնում, որ հանրակրթական ոլորտում շախմատի ներդրման մեր փորձը հետաքրքրում է աշխարհին, և մենք մեր փորձով ու գիտելիքներով ներկայանալի ենք ու հետաքրքիր:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ ԼԻՈՆՅԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, պատմական գիտությունների դոկտոր Խաչատուր Ստեփանյանը և ֆակուլտետի նախկին դասախոս, ԳԹԿ աշխատող Արմեն Ասրյանը նոյեմբերի 9-10-ը Ֆրանսիայի Լիոն քաղաքում մասնակցեցին Հայաստանի Հանրապետության ստեղծման և Առաջին աշխարհամարտի ավարտի 100-ամյակներին նվիրված միջազգային գիտաժողովին:

Բարձր մակարդակով կազմակերպված գիտաժողովին մասնակցում էին աշխարհի տարբեր երկրներից հրավիրված շուրջ 20 հայ և օտարազգի գիտնականներ: Ներկայացվեցին բարձրակարգ զեկուցումներ ՀՀ ստեղծման, կայացման, տարածքային ու դիվանագիտական խնդիրների, ինչպես նաև Մերձավոր Արևելքում Առաջին աշխարհամարտի ընթացքում և նրանից հետո ծավալված ռազմաքաղաքական իրադարձությունների, ժողովրդագրական փոփոխությունների և մի շարք այլ խնդիրների վերաբերյալ:

Գիտաժողովը կազմակերպվել էր Լիոնի և նրա շրջակայքի հայ մշակույթի զարգացման կազմակերպության կողմից՝ համագործակցությամբ Բուլլուքյան հիմնադրամի և Կովկաս կենտրոնի: Գիտաժողովի նախաձեռնողն ու համակարգողն էր ֆրանսահայ ազգային-հասարակական գործիչ, հայրենասեր Հիլտա Չոպոյանը: Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Ասրյանը ներկայացրել է ՀՀ ստեղծման պատմությունը և նրանում Արամ Մանուկյանի առանցքային ներդրումը: Մասնավորապես նա նշել է, որ Հանրապետությունը ստեղծվել է բացառապես 1918թ. մայիսին Սարդարապատում, Ապարանում և Ղարաքիլիսայում թուրք զավթիչներին հասցրած ջախջախիչ հակահարվածի շնորհիվ, և որ Մայիսյան հերոսամարտերի կազմակերպման և Հանրապետության ստեղծման, ինչպես նաև Հանրապետության պետականաշինության գործում Արամ Մանուկյանն ունեցել է առանցքային դեր՝ պատմության մեջ հավերժանալով իբրև Հանրապետության հիմնադիր:

Հայոց պատմության ամբիոնի դասախոս, դոկտոր Խ. Ստեփանյանի զեկույցը վերաբերել է ՀՀ հիմնադիր հայրերին: Զեկուցողը ներկայացրել է Հ. Քաջազնունու, Ալ. Խատիսյանի, Ավ. Ահարոնյանի, Ռուբեն Տեր-Մինասյանի, Ավ. Սահակյանի նվիրվածությունը հայ ժողովրդին և նրանց ներդրումը Հանրապետության կյանքում:

Ամփոփեցին օլիմպիադան

Տարիներ առաջ Պատմության և իրավագիտության ֆակուլտետը նախաձեռնեց և անցկացրեց դպրոցականների հանրապետական օլիմպիադա պատմություն առարկայից: Այսօր արդեն օլիմպիադայի անցկացումն ավանդական է դարձել և տարեցտարի առավել շատ դպրոցների աշակերտների է ընդգրկում:

Նոյեմբերի 9-ին ֆակուլտետում ամփոփվեցին «Հայոց պատմություն» առարկայից հանրապետական հերթական օլիմպիադայի արդյունքները: Այս տարի օլիմպիադային մասնակցել են Երևանի և մարզերի 88 միջնակարգ և ավագ դպրոցների 11-րդ և 12-րդ դասարանների 207 դպրոցականներ:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը շնորհավորեց մասնակիցներին, նրանց ծնողներին և ուսուցիչներին, ապա հավաստագրեր հանձնեց յուրաքանչյուր տարիքային խմբում բարձր միավորներ հավաքած և լավագույն տասնյակի մեջ հայտնված աշակերտներին, որոնք նաև ՀՊՄՀ վերոհիշյալ ֆակուլտետ ընդունվելու դեպքում կօգտվեն ուսման վարձի որոշակի զեղչերից:

Առավելագույն միավորներ ստացած 3-ական մասնակիցներն էլ արժանացան թանկարժեք նվերների և 30-50 տոկոսի չափով զեղչից օգտվելու հնարավորության:

Դեկանը շնորհակալություն հայտնեց աշակերտներին պատմություն առարկայից լավագույն գիտելիքներ ցուցաբերելու համար և կարևորեց համալսարան-դպրոց կապը:

Համագործակցությունը երկուստեք շահեկան է. ուսանողները ծանոթանում են բուհի մասնագիտություններին՝ ճիշտ կողմնորոշվելու մասնագիտության ընտրության հարցում, համալսարանն էլ ներկայացնում է բուհի և նրա մատուցած մասնագիտությունների առավելություններն ու հնարավորությունները՝ իրազեկելով, սակայն ընտրության հնարավորությունը թողնելով աշակերտներին:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՕԼԻՄՊԻԱԴԱՆ

Մանկավարժական համալսարանի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում նոյեմբերի 14-ին մեկնարկեց մաթեմատիկայի մրցույթը: Ֆակուլտետում արդեն երկրորդ տարին է, ինչ անց է կացվում նման մրցույթ, որին մասնակցում են Երևանի, Գյումրու և տարբեր մարզերի ավագ դպրոցների 11-12-րդ դասարանների աշակերտներ: Այս տարի մասնակիցների թիվը 180 է: Ի դեպ, մրցույթին մասնակցում են նաև մաթեմատիկայի մասնագիտացված դպրոցների աշակերտներ, որոնք հետաքրքրություն են հանդես բերել համալսարանական մրցույթի հանդեպ և փորձում են իրենց գիտելիքները կիրառել, ինչը, անշուշտ լավագույն փորձությունն է բուհ դիմելուց առաջ:

Համալսարանական տարբեր լսարաններում իրենց կրտսեր ընկերների աշխատանքին հետևում են ուսանողները: Դպրոցականները պետք է կարողանան հաղթահարել տրված հինգ խնդիր-առաջադրանքը, իսկ հաղթողները Մանկավարժական համալսարան ընդունվելու դեպքում կօգտվեն ռեկտորատի կողմից սահմանված զեղչերից:

Պրոֆեսոր Համլետ Միքայելյանի կարծիքով մրցույթը կխթանի աշակերտների հետաքրքրությունը բուհի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ դիմելու համար և կբարձրացնի դիմողների իրազեկվածության մակարդակը:

«Հաջորդ տարի պետք է փոխենք մրցույթի բովանդակությունը,-զրույցի ընթացքում ասում է պրոֆեսորը, -քանզի մաթեմատիկայի հիմքում սոսկ մաթեմատիկական գիտելիքը չէ: Դպրոցական մաթեմատիկայի հիմքում լեզուն է, գրականությունը, գեղագիտությունը, և աշակերտին միայն մաթեմատիկական խնդիր լուծելու առաքելություն չունի այդ առարկան դասավանդող ուսուցիչը: Նա պետք է աշակերտի առաջ բացի մաթեմատիկական աշխարհի հիմքում գոյություն ունեցող գեղագիտական միջավայրը և սովորեցնի շփվել այդ միջավայրի հետ»:

Օլիմպիադաների ու մրցույթների կազմակերպումը շարունակական է. առջևում ֆիզիկա և ինֆորմատիկա առարկաների օլիմպիադաներն են: Դպրոցականներն ամենայն լրջությամբ են վերաբերվում այս մրցույթներին. միգուցե վաղը նրանցից շատերն այս լսարանների դռները կբացեն արդեն որպես համալսարանի ուսանողներ:

ԻՆՉՊԵՍ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ԱՇԱԿԵՐՏԻ ՀԵՏ

«Ամենակարեւոր բաները մեզ ոչ ոք չսովորեցրեց: Առաջին դասարանում անցանք այբուբենը. դա հետո էլ կսովորեինք: Հետո թվաբանության դասատուն մեզ անգիր անել տվեց բազմապատկման աղյուսակը… երբ կյանքում մենք անընդհատ բաժանվելու էինք մեր մտերիմներից, մեր հույսերից, մեր ապրած տարիներից… Սովորեցրին հին ու նոր ժամանակների պատմություններ, որ ի՞նչ…

…Եվ ոչ ոք չսովորեցրեց ինչպես հասկանալ կողքինի տխրությունը, ինչպես լսել լռությունը, ինչպես տառապել… արժանապատվությամբ: Թողեցին, որ այդ ամենը սովորենք ինքնակրթությամբ՝ ինչպես ասում են: …Իսկ ավելի մարդավարի ասած՝ մեր սրտերի վրա ստացած վերքերով մենք պիտի սովորենք ամենակարեւոր բաները:

Իսկ վերքերից սպիներ են մնում…»:

Վարդգես Պետրոսյան

Վարդգես Պետրոսյանի ուսումնառության տարիներից տասնամյակներ են անցել, սակայն սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ դպրոցում շատ բան չի փոխվել՝ թե՛ մոտեցումների եւ թե՛ ծրագրերի առումով: Այսօր գաղտնիք չէ, որ շատ բարդ է ուսուցչի աշխատանքը. բարդացել են ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները, ինչն էլ իր հերթին ազդում է ուսումնական պրոցեսի վրա:

Ո՞րն է ելքը, ի՞նչ անել: Աշխարհը զարգանում է. այսօրվա աշակերտը շատ է տարբերվում երեկվա սովորողից: Սակայն դպրոցը կա, գործելու է, եւ միջավայրը փոխել է պետք, որպեսզի երեխան ուրախությամբ մտնի այն հաստատությունը, ուր պետք է ստանա կրթություն եւ շատ հարցերի պատասխաններ…

Շատ կարեւոր է հասկանալ, թե որոնք են մանկավարժական համատեղելիությանը նպաստող պայմանները: Իմ խորին համոզումով, մանկավարժը երբեք միայնակ չի կարող հասնել հաջողության: Համատեղ հաջողության հասնելու համար շատ կարեւոր է աշակերտին ճանաչել, հասկանալ, աջակցել եւ գնալ խելամիտ փոխզիջումների: Եվ ի վերջո, ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ վերանա զգացմունքային լարվածությունը եւ վախի զգացողությունը: Այս խոչընդոտը հաղթահարելուց է, որ համատեղ գործունեությունից երկուստեք բավարարվածություն կլինի, եւ աշակերտի մոտ սովորելու ցանկություն կառաջանա:

Հաճախ մենք հանդիպում ենք ուսուցչի կողմից ոչ արդյունավետ մանկավարժական ազդեցության ձեւերի, որն էլ իր հերթին մեծ հիասթափություն է առաջացնում աշակերտների մոտ, եւ նման դրսեւորումը պատճառ է դառնում աշակերտի մոտ բացասական երեւույթներին մեծ նշանակություն տալուն:

Իսկ ո՞րն է ուսուցչի կոչումը…

Կարծում եմ, լավ ուսուցիչը կոչված է փոխօգնության, վստահության, համագործակցության եւ անվտանգության ապահովման: Աշակերտի ակտիվ գործունեության ճիշտ կազմակերպումը, նրա ձայնը, կարծիքը լսելն ու լսելի դարձնելը, նրա տարիքին համապատասխան շարժվելը, վերջապես, ուսուցչի կողմից բոլոր իրավիճակներում զսպվածության, արժանապատվության, հեղինակության եւ հավասարակշռության գիտակցումը, նրան հաջողություն կբերեն, ինչի արդյունքում նա սիրել կտա ոչ միայն դպրոցը, այլ նաև ուսուցչի այդ պատասխանատու եւ շատ կարեւոր մասնագիտությունը:

Իսկ այսօր մեր երեխաները ստիպված են հանդուրժել ուսուցչի հուզական սպառումը, սթրեսները, ստեղծված կոնֆլիկտները և այլն՝ այս կամ այն խնդիրը լուծելու փոխարեն:

Հետևաբար, ավելի լավ չէ՞ ունենալ կառուցողական կամ ոչ կոնֆլիկտային մտածելակերպ եւ վարքագիծ, քանի որ այս դեպքում է, որ մանկավարժը կարող է հաղթահարել հակասությունները, և կշահեն երկու կողմերն էլ:

Իր մասնագիտությունը սիրող և գնահատող ուսուցիչը միշտ պատրաստ է միասնական գործունեության: Նա ունի աշակերտների հետ համագործակցելու եւ հիմնախնդիրները համատեղ լուծելու փորձ՝ հիմնված ընդհանուր արժեքների, գաղափարների եւ միմյանց փոխադարձաբար ընդունելու, իրար նկատմամբ բարյացակամ տրամադրվածության վրա: Շատ կարևոր է, որ մանկավարժն ընդունի միասնական գործին մասնակցելու, թիմում աշխատելու և համագործակցելու, ինքն իրեն ընդհանուրի մասը ընկալելու գաղափարը:

Ինչո՞ւ է այսօր մեր աշակերտը շատ սիրում համակարգչային խաղեր կամ ավելի շատ ժամանակ տրամադրում այս գործիքի հետ շփմանը: Կարծում եմ, որ համակարգիչը երեխաներին անհետաքրքիր տնային հանձնարարություններ չի տալիս, ներկա-բացակայով չի վախեցնում, թեեւ շատ բարդ խաղեր կան, որոնց բարդույթները հաճախ անգամ մեծերս չենք կարողանում հաղթահարել: Մինչդեռ աշակերտը դրանցով զբաղվում է մեծ ուրախությամբ, քան տնային աշխատանքներով, քանի որ համակարգչային խաղի յուրաքանչյուր աստիճան (կյանք) հաղթահարելուց հետո նա շատ ավելի վստահ եւ լավ է զգում, չնայած այն հանգամանքին, որ մինչեւ հաղթանակին հասնելը շատ է սխալվում: Այս պարագայում նրան վիրավորող չկա, ածականներ չեն կախում եւ չեն պիտակավորում, մինչդեռ դպրոցում տարեցտարի դասարանից դասարան փոխադրվելիս կամ որոշակի գիտելիք ձեռքբերելուց հետո երեխաները այս հաղթանակների ուրախությունը չեն զգում, չեն տեսնում:

Սիրելի՛ կոլեգաներ, կարծում եմ, այս ամենը նրանից է, որ աշակերտը ուսումնական պրոցեսի ընթացքում իրեն հիմնական գործող անձ չի տեսնում. եթե այս ամենը ճիշտ կազմակերպենք, կտեսնենք տարբերությունը:

Այս պարագայում շատ դիպուկ է մանկավարժի եւ այգեպանի աշխատանքի համեմատությունը: Ես չգիտեմ կամ չեմ տեսել որեւէ այգեպանի, ով գիտակցաբար կվնասի իր կողմից աճեցրած տնկին: Շատ կարեւոր է, որ մենք էլ չվնասենք մեր աշակերտներին, չվիրավորենք նրանց արժանապատվությունը, այլ օգնենք, որ գիտակցեն կրթության կարեւորությունը՝ հասունանան:

Եկեք ստեղծենք մեր երեխաների՝ ապագայի երկիրը կառավարողների համար ջերմ եւ կրթական միջավայր, որտեղ նրանք կկարողանան լիարժեքորեն դրսևորվել:

Մելանյա ԳԵՂԱՄՅԱՆ
«Հայ կրթություն» կրթական հինադրամի տնօրեն, մ.գ.թ.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 26-ին Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի (ՆՁԱԿ) գիտատեխնիկական գրադարանում կայացավ «Գրադարանները թվային միջավայրում: Համագործակցության արդյունավետ հարթակի ձևավորում» թեմայով քննարկում: Քննարկմանը մասնակցում էին գիտության, կրթության, գրադարանային-տեղեկատվական և մշակույթի ոլորտների ներկայացուցիչներ, մասնագետներթվում՝ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտից, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնից, Մտավոր սեփականության գործակալությունից, ՀՀ պետական կառավարման ակադեմիայից, Հայաստանի ազգային, ԳԱԱ հիմնարար գիտական, Հանրապետական գիտաբժշկական, Ավ. Իսահակյանի անվան քաղաքային, Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարաններից, այլ հաստատություններից:

Նիստը վարում էր գիտատեխնիկական գրադարանի ղեկավար, գիտությունների թեկնածու Լևոն Ղարիբյանը: Բացման խոսքով հանդես եկավ ՆՁԱԿ-ի տնօրեն Գևորգ Վարդանյանը և թեմայի արդիականության տեսանկյունից կարևորեց գրադարանի նախաձեռնությունը:

Ձեկուցումներով հանդես եկան գիտատեխնիկական գրադարանի առաջատար մասնագետներ Գայանե Հովհաննիսյանը, Հասմիկ Հարությունյանը, Լաուրա Ավետիսովան, Իվետա Միշինևան, Լիլիթ Վարդանյանը, Նաիրա Հարությունյանը: Նրանք անդրադարձան գրադարանային ֆոնդերի համալրման խնդիրներին, նրանց լուծման այլընտրանքային ուղիներին, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ գրադարանային հավաքածուների սպասարկմանը, ինչպես նաև հեղինակային իրավունքի տեսանկյունից հիմնապաշարների թվայնացման խնդիրների ու բնօրինակների պահպանման անհրաժեշտությանը: Անտարակույս նշված հարցերը նոր ժամանակներում ունեն տեսամեթոդական և կիրառական կարևոր նշանակություն:

Պետք է նշել, որ ուշադրության արժանի զեկուցումները հագեցած էին ուսումնասիրությունների հիման վրա կազմված աղյուսակային ցուցադրութուններով, ճյուղային գիտությունների վերաբերյալ վիճակագրական բազմազան տվյալներով և վերլուծական նկարագրություններով, որոնք վկայում են գիտատեխնիկական գրադարանի ռազմավարական գործունեության ու գործառույթների կատարման ուղղությամբ առկա հաջողությունների մասին:

Քննարկվող թեմաների շուրջ տեղի ունեցավ մտքերի փոխանակում, եղան օգտակար առաջարկություններ: Ըստ Լևոն Ղարիբյանի՝ գրադարանների առջև ծառացած մարտահրավերները հաղթահարելու, հատկապես գրականության համալրման, մատենագիտական սպասարկման և ընթերցանության ակտիվացման առումով անհրաժեշտ է հայկական գրադարանների միջև ընդլայնել համագործակցությունը: Այնուհետև, գրադարանային-տեղեկատվական գործունեության մեջ գրադարանավարներին հուզող թվայնացման և էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործման մասին խոսեց Մտավոր սեփականության գործակալության պետի տեղակալ Քրիստինե Համբարյանը՝ ներկայացնելով «ՀՀ հեղինակային և հարակից իրավունքների մասին» նոր օրենքի նախագծում ներառված փոփոխությունները: Հաշվի առնելով գիտատեխնիկական գրադարանի փորձը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պրոֆեսոր Գագիկ Սուքիասյանը հանդես եկավ գրադարանում ռազմական գրականության և մատենագիտության բաժին ձևավորելու առաջարկությամբ՝ հայոց բանակին գիտատեխնիկական գրականությամբ ապահովելու, ռազմական գործի զարգացման և գրադարան-բանակ համագործակցության նպատակով:

Ամփոփելով՝ նշենք, որ քննարկված թեմաները և քննարկման արդյունքները գրադարանագիտական, մատենագիտական, գրքագիտական և փաստաթղթագիտական մտքի զարգացումներից բացի, առանցքային նշանակություն կունենան սոցիալական հաղորդակցությունների խորացման և ընթերցող հասարակության ձևավորման նոր գործընթացներում:

Գագիկ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Այցելություն դպրոց

Նոյեմբերի 9-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը և պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանն այցելեցին Ապարանի ֆիզմաթ ավագ դպրոց: Աելիտա Դոլուխանյանը դպրոցականների համար հանդես եկավ «Գրիգոր Նարեկացու «Մատյանի» միջազգային նշանակությունը» թեմայով զեկուցմամբ:

ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Ամալյա Սուքիասյանը Տավուշի մարզի Տավուշ քաղաքից է: Ավարտել է վիրտուալ համալսարանը, ապա ընդունվել Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետ: Այժմ համալսարանի առկա համակարգի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի է և ճանաչվել է ֆակուլտետի այս ուսումնական տարվա լավագույն ուսանող:

ԱՆԸՆԴՀԱՏ ՓՈՐՁՈՒՄ ԵՄ ԵՎՍ ՄԵԿ ՔԱՅԼ ԱՆԵԼ

- Ամալյա, ինչո՞ւ ընտրեցիր հենց այս ֆակուլտետը. որևէ մեկը ուղղորդե՞ց, թե՞ դա քո որոշումն էր:

- Մանկուց ստեղծագործել եմ, մայրիկս աշխատում էր քաղաքային գրադարանում, և իմ առօրյան սերտորեն կապված էր գրքերի հետ: Սիրում էի ստեղծագործել, սիրում էի գրականությունը և իմ ընտրությունը, կարելի է ասել, կապված է ոչ միայն ստեղծագործելու, այլև գրականագիտության հանդեպ իմ հետաքրքրությունների հետ: Մանկուց ուսումնասիրել եմ հայ և համաշխարհային գրականությունը, թեև գրականությունը մի օվկիանոս է, որի մեջ կարելի է անընդհատ սուզվել և նորանոր բացահայտումներ անել:

- Ունե՞ս սիրելի գիրք:

- Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը», Ռեմարկի «Հաղթական կամար»-ը… Շատ են այն գրքերը, որոնք ինձ համար առաջին հորիզոնականում են, և դժվարանում եմ մեկը նշել. լավագույնները շատ են:

- Դու գրում ես Բրայլյան համակարգո՞վ…Ինչպե՞ս ես կարդում:

- Ես օգտվում եմ համակարգչային հատուկ ծրագրերից, տեքստի ձայնը տալիս եմ և համակարգիչը կարդում է…Նաև տեքստեր եմ գրում համակարգչի միջոցով, խմբագրում եմ և ուղարկում…

- Ես տեղեկացա, որ դու հիանալի տիրապետում ես անգլերեն լեզվին. նորից համակարգչի՞ց ես օգտվում…

- Դպրոցում լավ եմ սովորել, խորացրել եմ ինքնակրթությամբ, ամենօրյա աշխատանքով, տարբեր ձեռնարկներից եմ օգտվել, շատ բառեր եմ սովորել, թարգմանություններ եմ արել…

- Քո մասին ուրիշ ի՞նչ կպատմես…

- Ծնվել եմ Տաշիրում: Ավարտել եմ Տաշիրի N1 միջնակարգ դպրոցը, այնուհետև տեղափոխվել եմ Երևան՝ 8-11-րդ դասարանները սովորել N14 տեսողական խանգարումներով երեխաների հատուկ դպրոցում:

Արդեն ասացի, որ սիրում եմ ստեղծագործել, սիրում եմ անգլերեն լեզուն, իհարկե մայրենիից հետո… Որովհետև անգլերենը հնարավորություն է տալիս կարդալ շատ գրքեր, որոնք դեռ թարգմանված չեն, և լսել երգեր, իհարկե համակարգչի միջոցով: Համակարգիչը և անգլերեն լեզուն լայն հնարավորություններ են բացում իմ առաջ՝ շփվելու աշխարհի հետ, ավելին իմանալու…

- Նկատելի է կրթության հանդեպ քո մոտեցումը. դու ավարտել ես վիրտուալ համալսարանը, այժմ էլ գերազանց առաջադիմություն ես ցուցաբերում Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետում:

- Ինձ համար կրթությունը բացարձակ արժեք է, ես այն շատ եմ կարևորում: Եվ ձգտում եմ կրթության մեջ ավելիին հասնել: Անընդհատ փորձում եմ ևս մեկ քայլ անել՝ զարգացնելու իմ կրթական մակարդակը:

- Ամալյա, ակնկալո՞ւմ էիր, որ հաղթող կճանաչվես, կդառնաս ֆակուլտետի լավագույն ուսանողը:

- Յուրաքանչյուր դիմող մրցույթից ակնկալում է ինչ-որ բան: Ամեն ինչ կախված է քվեարկությունից, ուսանողների ընտրությունից: Իմ մրցակիցն էլ լավ տվյալներ ուներ: Չեմ ուզում ինքնագնահատական տալ… Միգուցե ինձ մի քիչ ավելի գնահատեցին ընտրողները՝ հաշվի առան իմ ստեղծագործելու ձիրքը, գերազանց առաջադիմությունը, ակտիվությունը, գիտական հետազոտությունները… Վերջերս ,Սփյուռքե գիտաուսումնական կենտրոնում ֆրանկոֆոնյան օրերին նվիրված գիտական ընթերցումների ժամանակ ես ներկայացրի «Վիկտոր Հյուգոյի Փարիզի աստվածամոր տաճարը» վեպի կերպարները զեկուցումը:

- Գիտակրթական ուղղվածությունից զատ ուրիշ ի՞նչ ես սիրում, ինչո՞վ ես զբաղվում…

- Վերը թվարկածներս խլում են իմ ամբողջ ժամանակը: Սիրում եմ ռադիո լսել, զբաղվել ինքնազարգացմամբ:

- Քեզ մոտ կամային որակները շատ բարձր են…Մարդու մեջ ի՞նչն ես գնահատում ամենից շատ:

- Ազնվությունը, համառությունը և կրթության հանդեպ սերը:

- Լավ ընկերներ ունե՞ս, նրանք օգնո՞ւմ են քեզ…

- Այո, եթե հարկ է լինում, բայց ես սիրում եմ ինքնուրույն անել ամեն ինչ՝ համակարգչի միջոցով: Բրայլյան համակարգից օգտվել եմ, բայց համակարգիչն այդ համակարգից 100 քայլ առաջ է…

- Ի՞նչ ստեղծագործություններ ունես:

- Գրում եմ արձակ, թարգմանում եմ անգլերեն:

- Ինչ ես կարծում՝ 10 ֆակուլտետների լավագույնների հետ կարո՞ղ ես մրցակցել և հաղթել:

- Չգիտեմ, որովհետև ծանոթ չեմ նրանց հնարավորություններին:

- Ի՞նչ է քեզ համար հայրենիքը: Կապրեի՞ր ուրիշ երկրում:

- Միգուցե, եթե հնարավորություն տրվեր: Հայրենիքը միայն տարածքը չէ, որի վրա ապրում ես, հայրենիքին նվիրվածությունը ապացուցվում է գործով՝ որտեղ էլ լինես:

- Կուզեի՞ր թերթի միջով բարձրաձայնել որևէ խնդրի մասին: Կա՞ն խնդիրներ քո ուսանողական առօրյայում:

- Ես միայն հիացած եմ այս ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմով: Հաճելի մթնոլորտ է: Դասախոսները ուսանողակենտրոն են:

-Կշարունակե՞ս մագիստրատուրան բակալավրիատն ավարտելուց հետո:

- Դեռ ժամանակ կա մտածելու: Հավելեմ, որ 1910-12 թվականներին ավարտել եմ վիրտուալ համալսարանի հայոց պատմության բաժինը:

-Այնուամենայնիվ, ո՞վ կամ ի՞նչն է քեզ օգնում դժվար պահերին:

- Սերը կյանքի, ընտանիքի, հայրենիքի, կրթության հանդեպ և մայրիկս, որը միշտ իմ կողքին է:

- ***Շնորհակալ եմ հարցազրույցի համար: Շնորհավորում եմ ֆակուլտետում լավագույն ուսանող ճանաչվելու կապակցությամբ: Մաղթում եմ, որ քեզ միշտ ուղեկցի հաջողությունը, որ քո կամային հատկանիշները երբեք չկորցնես և միշտ առաջ գնաս:***

Զրույցը՝
Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ԼՈԳՈՊԵԴԻԱ. ԲԱՑԱՌԻԿ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոսները և ուսանողները նշեցին լոգոպեդի օրը: Հավաքը նպատակ ուներ ոչ թե հաջողություններն արձանագրել, այլ մարտահրավերներին միասին դիմակայելու ուղիներ գտնել:

Ֆակուլտետի դեկանը խոսեց լոգոպեդի մասնագիտության կարևորության մասին, մասնագիտություն, որի հիմքում մարդն է և նրա խոսքը: Լոգոպեդները կոչված են շտկելու խոսքային խանգարումները, իսկ մասնագիտությունն առնչվում է տարբեր ոլորտների՝ բժշկությանը, հոգեբանությանը, կենսաբանությանը և լեզվաբանությանը:

«Բնության մեջ միայն մարդուն է բնորոշ խոսքը, որն ունի անսահման ու բազմապիսի գործառույթներ: Մեր մասնագիտությունը ամենամարդասիրական մասնագիտություններից է: Եվ քանի որ լոգոպեդիան առնչվում է տարբեր ոլորտների, մենք պետք է բաց լինենք համագործակցության մեջ:

Խնդիրը համամարդկային է, Մենք կոչված ենք օգնելու այն մարդկանց, ում խոսքը չի ձևավորվում կամ խաթարվում է. մենք պետք է կարգավորենք մարդկային խոսքի խաթարումը և օգնենք մարդու լիարժեք սոցիալիզացիային»,-ասաց ֆակուլտետի դեկան Սիրանուշ Կարապետյանը՝ ներկաներին շնորհավորելով մասնագիտական օրվա առթիվ:

Դեկանը հավելեց, որ մասնագիտության հենքը մանկավարժությունն է, որ լոգոպեդն իր աշխատանքում կիրառում է մանկավարժական մեթոդներ, նաև՝ բժշկական և հոգեբանական գիտելիքներ:

Ապագա լոգոպեդներին շնորհավորեց ամբիոնի վարիչ, գիտությունների դոկտոր Ստեփան Գրիգորյանը. «Դուք բացառիկ մասնագիտության կրողներ եք, դուք կոչված եք օգնելու մարդուն՝ գտնելու իր տեղը հասարակության մեջ և, կարելի է ասել, դուք արդեն գտել եք ձեր տեղը կյանքում»:

Լոգոպեդիա մասնագիտության 1-ին կուրսի ուսանողները ուսանողուհի Ա. Աղասարյանի նախաձեռնությամբ ներկայացրին տեսասահիկ մասնագիտության առանձնահատկությունների մասին՝ փաստելով, որ «Լեզուն մարդկային հաղորդակցության կարևոր միջոց է, և լոգոպեդիան գիտություն է խոսքի խանգարման, դրա շտկման և կարգավորման մասին, մարդկությունը մասնագիտության մասին առաջին քայլերն արեց 19-րդ դարի վերջին, իսկ այսօր արդեն այն արագ զարգացող գիտություն է: Ուսանողները թվարկեցին լոգոպեդիայի կապը այլ ոլորտների հետ, խոսեցին լոգոպեդական միջամտություններում մանկավարժական մեթոդների կիրառման մասին, բարձրաձայնեցին, թե ինչու են ընտրել այդ մասնագիտությունը, շնորհավորեցին միմյանց, կոչ արեցին՝ լինել բարի, համբերատար, լայնախոհ ու ինքնակատարելագործվող: Նաև խոստովանեցին՝ թեև նոր են ընտրել մասնագիտությունը, բայց հասցրել են սիրել և լավ մասնագետներ դառնալու համար պետք է լինեն վերոհիշյալ որակների կրողներ»:

Լոգոպեդի մասնագիտության տեղեկացվածության մակարդակի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի լավագույն ուսանող ճանաչված Արաքսյա Լոբոդիչը, որը սոցիոլոգիական վերլուծություններ էր արել Երևանում և Հայաստանի չորս մարզերում:

Օրը շարունակվեց մասնագիտական քննարկումներով և մարտահրավերներին դիմակայելու համատեղ առաջարկներով:

Շնորհավոր տոնդ, լոգոպեդ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Նոնա Պողոսյանի պոեզիայի նրբանցքներում

Բանասիրական ֆակուլտետի հյուրը Հայաստանի գրողների միության անդամ, ՀՀ ԶՈՒ փոխգնդապետ Նոնա Պողոսյանն էր, ով հեղինակ է վեց բանաստեղծական ժողովածուների: Հանդիպումը կազմակերպել էր հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

«Հայ գրականությունն իր դարավոր պատմության մեջ հարուստ է կին բանաստեղծուհիների անուններով»,-նկատում է պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանն ու հավելում. «Ինչպես Ավետարանն է ասում. «Բազում են կանչվածները, բայց սակավ են ընտրյալները»: Նոնա Պողոսյանը ընտրվել է, որովհետև նրա անցած ուղին բոլորովին նման չէ ուրիշների անցած ճանապարհին»:

Հյուրը ողջունեց ներկաներին՝ իր պոեզիայի շնչով ոգևորված ուսանողներին ու դասախոսներին: Խոսելով իր կյանքի ճանապարհի մասին՝ բանաստեղծուհին ասում է. «Պետք է չվախենալ ու ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում շրջադարձ անել»:

Եռանկյունու վերածված կյանքի ընթացքում կիբեռնետիկան, բանաստեղծական արվեստն ու զինվորականի գործը թեև միմյանց անհաղորդ, սակայն մշտապես ուղեկից են եղել Նոնա Պողոսյանին: Նրա պոեզիան համակված է ռազմական ոգով, հայրենի երկրի սիրով, լուսավոր երանգներով և քնարական շեշտադրումներով:

Բանաստեղծուհին պատասխանեց ներկաներին հետաքրքրող հարցերին, ներկայացրեց իր ստեղծագործություններից որոշ հատվածներ: «Եթե որևէ ազգի կանայք անձնվեր են հայրենիքի շահերի խնդրում, ապա այդ ազգն ունի հարատևելու երաշխիքներ: Նոնա Պողոսյանի պոեզիան հայրենասեր կնոջ պոեզիա է»,- նշում է պրոֆեսոր Ա. Դոլուխանյանը՝ հավելելով. «Նոնա Պողոսյանն իր ստեղծագործական ծաղկուն շրջանում է և ասելիք ունի: Սպասենք նրա բանաստեղծական նոր դրսևորումներին պարբերական մամուլում և առանձին գրքով»:

«Հետաքրքիր ոճ ու բազմախորհուրդ բանաստեղծություններ»,-այսպես է բնութագրում Նոնա Պողոսյանի ստեղծագործության արվեստը գրականագետ Ն. Խաչատրյանը,- «Աշնան նրբանցքներում», ուր երջանիկ լինելու հույսը չորացած տերև է, զարմանալի չէ, որ քամիները «սսկվեն» ամոթից: Այս ամենն այնքան է խոսուն, որ բառերն արդեն ավելորդ են, և լռությունն է դառնում հոգու աղմուկի վկան:

Հետաքրքիր է բանաստեղծուհու խոհ-խորհուրդը»:

Ուսանողների հայացքում տեսանք մեծ հավատ, նոր սպասումներ դեպի գալիքը, իսկ աչքերում՝ լույսի շող, որոնց տանող ճանապարհի երաշխիքը այսօր ևեթ բանաստեղծուհի Նոնա Պողոսյանի պոեզիան է,-ասում է դեկանի տեղակալ Ն. Խաչատրյանը, իսկ բանաստեղծուհու ֆեյսբուքյան էջում կարդում ենք հետևյալ գրառումը. «Այս անմոռանալի հանդիպումը, ինձ ուղղված բազում հարցականներով տաք հայացքները դեռ կտանեմ օրերիս միջով որպես ինքնաճանաչողության մի դաս, որպես պոեզիայի գործիքով մարդկային շփումներն ավելի անկեղծ ու շիտակ դարձնելու եզակի հնարավորություն...Շնորհակալ եմ….»:

Կառլեն ՆԱԶԱՐՅԱՆ



Լավատեսության մեծ վարպետը

Այս տարի լրացել է գեղանկարիչ պրոֆեսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ ակադեմիայի իսկական անդամ Հովհաննես Զարդարյանի ծննդյան 100 ամյակը: Այն նշվեց հանրապետության ամենակարևոր ցուցասրահներում և ոչ միայն Հայաստանում: Այդ իրադարձությանը չէինք կարող չարձագանքել նաև մենք, քանզի վարպետը դասավանդել է մեր բուհում 1968-1988 թվականներին:

Զարդարյանն իր մասնագիտական կրթությունը ստացել էր մի քանի ուսումնական հաստատություններում՝ Թիֆլիսի գեղարվեստի ակադեմիայում, այնուհետև Երևանի Գեղարդ տեխնիկումում, ուսումնառելով այնպիսի վարպետների մոտ ինչպիսիք են Վահրամ Գայֆեճյանը և Սեդրակ Առաքելյանը: Այնուհետև մեկնում է Լենինգրադ՝ շարունակելու ուսումը Ի. Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիայում: Նա պատկանում է երկրորդ սերնդի հայ նկարիչներին, որոնք շարունակեցին մեծ Սարյանի գունազգացողության փիլիսոփայությունը, դրանում տեսնելով հայրենի եզերքի անզուգական գեղեցկությունը:

Զարդարյանի աշխատանքները շատ շուտով աչքի են ընկնում իրենց բարձր վարպետությամբ, ինքնատիպ գունազգացողությամբ, ամուր գծանկարով: Այս ամենը գերկարևոր էր նկարչի ինքնուրույնության կայացման համար: Զարդարյանի ժանրային միջավայրը բազմազան է՝ ստեղծագործել է և՛ կենցաղային, և՛ դիմանկարի, և՛ նատյուրմորտի, և՛ բնանկարի ժանրերում: Հովհաննես Զարդարյանի ստեղծագործությունները մեր առջև հայտնվում են իրենց մաքուր հմայքով: Հեղինակի ինտելեկը թույլ էր տալիս նրան կատարյալ չափի զգացողություն և բարձրագույն ազնվական ճաշակ, նրա աշխատանքները ներդաշնակվում են իրենց արտաքին ձևով և խորքային էությամբ, սրանք էին այն հիմնատարրերը, որոնցով հեղինակը արտահայտում էր գեղանկարչի իր էությունը և միջավայրի իր ընկալումը: Վարպետի ստեղծագործությունները ճառագում են իրենց ներքին լարվածությամբ՝ ստիպելով հանդիսատեսին ներքաշվել այն էմոցիոնալ ներաշխարհը, որը ստեղծել էր հեղինակը իր մտքի և տաղանդի շնորհիվ: Վարպետի ստեղծագործություններում զգացմունքները բաց են, գույնը բազմազան և այդ բազմազանության մեջ կա զուսպ աշխարհընկալում: Իր ողջ էությամբ հեղինակը պանթեիզմի հետևորդ է: Նրա ցանկացած ստեղծագործություն փառքի երգ է հայրենիքին: Վարպետի մթնոլորտը ներշնչում է անվերջություն, ազատություն, վեհություն: Ամեն մի աշխատանք՝ լինի դա սոցռեալիզմի սահմաններում կատարված ստեղծագործություն, թե ձնհալից հետո ստեղծված, լի են կատարյալ ազնվությամբ և կյանքի հաստատման բնույթով: Այս հեղինակին կարելի է դասել լավատեսության մեծ վարպետների շարքին.՝ նա երգիչն է կյանքի և պատահական չէ, որ Զարդարյանի՝ 40-ականների համար ավանդական թեմայով կատարված ստեղծագործությունը՝ «Սևանգեսի շինարարների հաղթանակը», դարձել էր օրինակելի, դասական նույն շրջանի ստեղծագործությունների շարքում: Հեղինակի «Գարուն» ստեղծագործությունը համարվում է ամենալավատեսականներից մեկը, այն Բրյուսելում արժանացել է մեծ արծաթե մեդալի, նրանում հեղինակը բարձրաձայնեց և՛ երիտասարդությունը՝ և՛ կյանքը, և՛ գարունը, և՛ բնության անզուգական գաղտնիքն ու էությունը. դրանով առաջնորդվեց Վարպետն իր ողջ ստեղծագործական ճանապարհին. «Ազնվությունը արվեստում հոգու ուժն է, այն ամենը, ինչն առատորեն վերցրած է բնությունից, այն մեծ գաղտնարան է անվերջ մտքերի, գույնի, իմաստության աղբյուր: Ես հավատում եմ այդ գաղտնարանին և անդադար սովորում նրանից…»- ասում էր նա:

Այս կյանքի նկատմանբ սերը, որը դրսևորվեց գրեթե նույնիսկ ամենափոքր ծաղկի պատկերման մեջ, չէր կարող իր ազդեցությունը չունենալ Վարպետի մանկավարժական գործունեության ընթացքում: Դասավանդելով Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտում, հետո էլ Խ. Աբովյանի անվան մանկավարժման ինստիտուտում՝ Վարպետը ունեցել է մեծ ավանդ երիտասարդ նկարիչների կրթության գործում: Հովհաննես Զարդարյանի անվան արվեստանոցի բացումը մանկավարժական համալսրանում շատ կարևոր է երիտասարդ սերնդի համար: Այն պարտավորեցնող է, և ստիպում է կյանքի նրբագույն թրթիռով մոտենալ Արարչի ստեղծագործություններին՝ Բնությանը, Մարդուն, սիրել այդ ամենը և լինել ազգի արժանապատիվ զավակ: Այնպիսին, ինչպիսին էր տաղանդավոր նկարիչ Հովհաննես Զարդարյանը, ով երգեց կյանքն իր հաստատող արվեստով:

Արմինե ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Արվեստաբան, արվեստագիտության թեկնածու

Բուհական եզակի դասագիրք



ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոեցյանի, Շվեյցարիայի Բեռն քաղաքի համալսարանի Զարգացման և շրջակա միջավայրի կենտրոնի ավագ գիտաշխատող դոկտոր Հեին Մեսսենի, Թբիլիսիի պետական համալսարանի դոկտոր, պրոֆեսոր Նոդար էլիզբարաշվիլիի, ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ԵՏՀ քարտեզագիր, հետազոտող Տիգրան Բաբայանի, աշխարհագրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դասախոս Սուսաննա Խաչատրյանի, Շվեյցարիայի Բեռնի համալսարանի աշխարհագրության ինստիտուտի և Զարգացման ու շրջակա միջավայրի կենտրոնի պրոֆեսոր, դոկտոր Թոմաս Կոհլերի, հեղինակությամբ և CDE-ի համար Կարլ Հերվինգի համակարգմամբ լույս է տեսել դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար՝ «Լեռնային տարածքների կայուն զարգացում և ռեսուրսների կառավարում» վերնագրով: Այն հետազոտական դասընթաց է կովկասյան տարածաշրջանում՝ ստեղծված Հայաստանի և Վրաստանի գործընկեր համալսարանների միասնական հետազոտությունների հիման վրա:

Գիրքն ստեղծվել է 2015-2018 թթ.-ին ՀՊՄՀ-ում իրականացվող SKOPES միջազգային կրթական ծրագրի շրջանակներում:

Գիրքը գրված է հայերեն և անգլերեն լեզվով, տարբեր բաժիններում հանգամանորեն ներկայացված են տեսական դրույթներ, կայուն զարգացման մեթոդաբանությանը, գլոբալ հիմնախնդիրներին և կայուն զարգացմանը, Կովկասի և Հայաստանի կայուն զարգացման հիմնախնդիրներին վերաբերող ուսումնասիրությունները, ինչպես նաև զետեղված է դաշտային հետազոտությունների անդրգիտակարգային դասընթացը:

Դասագիրքը նախատեսված է համանուն առարկայական ծրագրի ուսուցման համար:

Գրքի գիտական խմբագիրներն են պրոֆեսորներ Աշոտ Խոեցյանը և Տիգրան Բաբայանը, գրախոսները՝ պրոֆեսոր Հովիկ Սայադյանը և դոցենտ Ներսես Սամվելյանը:

«Լեռները, տեղաբաշխված լինելով երկրագնդի տարբեր աշխարհագրական գոտիներում, պայմանավորված դրանց ձևավորման ընթացքով և մեկուսացվածության աստիճանով, ինքնատիպ լանդշաֆտների, էնդեմիզմի ու կենսաբազմազանության արժեքավոր կենտրոնացման վայրեր են,-ասված է նախաբանում: …Հաշվի առնելով երկրի անհամամասնական տարածքների զարգացումը, յուրացված տարածքները բնութագրող ցուցանիշների խիստ տարբերությունը, բնակեցման և գյուղատնտեսության համար նպաստավոր տարածքների սահմանափակ լինելը, մայրաքաղաքի գերծանրաբեռնվածությունը, երկիրը ներկայացնող լանդշաֆտային բնութագրերի պահպանումն ու բարելավումը դառնում են արդիական և հրամայական պահանջ»:

Հետազոտությունների արդյունքներն ընդգրկող բուհական դասագիրքը միտված է արդիական այդ հիմնախնդիրների լուծման հնարավոր ուղիների ներկայացմանը:

Ավետիք Հակոբյանի հիշատակին

Նոյեմբերի 14-ին Գեղարվեստական կրթության ֆակուլտետում կայացավ ցուցահանդես՝ նվիրված ֆակուլտետի դասախոս Ավետիք Հակոբյանի հիշատակին:

Ավետիք Հակոբյանը համալսարանում գեղանկարչություն է դասավանդել 1977-2018 թվականներին, եղել է հանրապետական, համամիութենական և արտասահմանյան ցուցահանդեսների մասնակից:

Ֆակուլտետում կայացած ցուցահանդեսը կազմակերպվել է ուսանողների նախաձեռնությամբ՝ նվիրված սիրելի դասախոսի հիշատակին: Ցուցադրված աշխատանքները կատարված են վարպետորեն, վստահ, բազմաժանր են, սակայն ամեն մեկը յուրովի ինքնատիպ է և հետաքրքիր:

Ուսանողները երկար կպահեն իրենց մեջ դասախոսի նկարչական ձեռագիրը և կառաջնորդվեն նրա տված դասերով:

Աշունը թախիծ ու տրտմություն է բերում մարդկային հոգուն, ինքն իր հետ մենակ մնալու տրամադրություն, տխուր, բայց միաժամանակ նաև գեղեցիկ զգացողություններ…

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում այս անգամ աշնանային զգացողությունների կրողն ու փոխանցողը համալսարանական հիմնական դպրոցի, հենակետային ավագ դպրոց-վարժարանի սաներն էին և Բանասիրական ֆակուլտետի ուսանողները: Համատեղ դասմիջոցառման ձևաչափը նրանց բոլորին համախմբել էր աշնանային գույների ու նվագների շուրջ: Ներկաները նորից ու նորից ըմբոշխնեցին Վահան Տերյանի և Համո Սահյանի բանաստեղծական աշխարհն զգալու հմայքը, կիթառի մեղմ հնչյունների ներքո լսեցին Ռուբեն Հախվերդյանի աշնանային երգերը:

Մասնակիցներն ամփոփեցին. ավարտին մոտեցավ ևս մեկ սիրո աշուն, «հավատացին ու հավատացրին», որ աշնանը փոխարինելու են ձմեռը, գարունը, ամառը ու նորից աշուն՝ տաք ու շռայլ գույներով, անիրական գեղեցկությամբ…Եվ որ յուրաքանչյուրն իր մեջ պետք է պահի ու գուրգուրի իր կյանքի աշունները…

Ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը կարևորեց դասի բոլոր տեսակները, այդ թվում՝ աշնանը նվիրված համատեղ դաս-միջոցառումը՝ որպես բարության, շռայլության ու մարդասիրության դաս:

«Աշունը մեր կյանքի հանրագումարն է»,-ասաց դեկանի տեղակալ Նաիրա Խաչատրյանը՝ աշակերտներին և ուսանողներին մաղթելով պայծառ աշուններ և նվիրելով իր ստեղծագործության մի պատառիկ.

Աշունը եկավ և իր հետ բերեց
Անուշ օրհնություն ու անուշ բերկրանք,
Ու հիմա նախշուն գորգեր է փռել
Սար ու ձորերի, դաշտերի վրա:
Աշնան շշունջը բյուր իմաստ ունի,
Ծով-ծով բարիքի սուրբ տարեմուտ է:
Աշունը անո՜ւշ-անո՜ւշ հոգնություն
Սրտիս կրակը, հավատս ունի…

Պրոֆեսոր Սուրեն Դանիելյանն էլ նկատեց. «Աշնան արևի խորհուրդը հրաժեշտի երանգ ունի, բայց աշնան տրտմությունն ու հմայքը թող գերի բոլորին, տանի իր հետևից, ուղեկցի ողջ կյանքի ընթացքում» և մաղթեց, որ աշնան խորհուրդը յուրաքանչյուրը տեսնի իմաստավորված:

Մասնակիցները շնորհակալություն հայտնեցին ուսուցիչներին և դասախոսներին, նաև իրենց աշնանային գույների շուրջ համախմբած մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Աստղիկ Բոյաջյանին:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի ուսանողներն էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանի գլխավորությամբ նոյեմբերի 8-ին այցելել էին «Դիլիջան» ազգային պարկի Կովկասյան ազնվացեղ եղջերուների վերաբնակեցման կենտրոն: Ուսանողները հնարավորություն ունեցան մոտիկից տեսնել այդ գեղեցիկ կենդանիներին, շփվել նրանց հետ և Հայաստանում եղջերուների տեսակը վերականգնող ծրագրի մասին տեղեկություններ ստանալ:

Նշենք, որ Կովկասյան ազնվացեղ եղջերուն անօրինական որսի արդյունքում վերացել և վերջին անգամ Հայաստանում արձանագրվել է 90-ական թվականներին: 2018թ. մարտ ամսին Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստան են բերվել 3 կովկասյան ազնվացեղ եղջերուներ կենդանու այս տեսակը վերականգնելու համար:

«Հայաստանում Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիրը» նախաձեռնել են ՀՀ բնապահպանության նախարարությունը և Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղը 2013 թվականին:

Եղջերուների բազմացման կենտրոնը մեկ հեկտար է, որտեղ պահպանվելու է եղջերուների մայրական կազմը՝ 3-4 արու և 10-11 էգ: Ակնկալվում է, որ ամեն տարի կենտրոնում կունենան 9-10 ձագ, որոնք կտեղափոխվեն 10 հեկտար տարածքով ազատավանդակ, որտեղ կբացառվի նրանց շփումը մարդկանց հետ և մոտավորապես 3 տարուց հետո եղջերուների վրա տեղադրվելու են ռադիոորսակներ (անվտանգությունն ապահովելու համար), և նրանք բաց են թողնվելու վայրի բնություն: Ազատավանդակները էլեկտրական ցանկապատ ունեն՝ գիշատիչներից պաշտպանելու համար:

Ուսանողներն անչափ կարևորում են նմանատիպ այցերը, որոնք վաղվա սերունդներին կրթող մանկավարժներին օգնում են լինել տեղեկացված, որպեսզի նրանք հետագայում աշակերտներին սովորեցնեն ինչպես հոգ տանել բնությանը:

Էլյա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի Կենսաբանության բաժնի, մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

ԼՃԱՇԵՆԻ ԱՇՈՏ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը տարիներ շարունակ մասնագիտական բազմաբնույթ համագործակցություն է իրականացնում Լճաշեն գյուղի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հետ, դպրոց, որի հիմնադրման 110-ամյակը մեծ շուքով նշվեց 2017 թվականին: Մեծ գիտնականի անունը կրող կրթական

այս երկու օղակների համագործակցությունը պարբերական բնույթ է կրում և ուղղված է տարրական դասարաններում կրթական գործի բարելավմանը՝ մասնավորապես մայրենի լեզվի դասավանդման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Նոյեմբերի 13-ին դպրոցի տնօրեն Սիդա Մուրադյանը հերթական անգամ սիրով ընդունեց մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի առաջարկը և հյուրընկալեց դասախոսներին՝ մեթոդական արդյունավետ համագործակցության ակնկալիքով՝ կարևորելով այդպիսի հանդիպումների անհրաժեշտությունը՝ մեթոդական նորույթներին ծանոթանալու, դրանց տիրապետելու և ժամանակի հետ համահունչ քայլելու տեսանկյունից:

Այս անգամ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներին միացել էին նաև մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներ Քնարիկ Հովհաննիսյանը և Աննա Բաբաջանյանը:

Այցելությունն ուներ մի քանի նպատակ՝

* հանդիպել դպրոցի տարրական օղակի ուսուցիչներին, նրանց հետ կազմակերպել կլոր սեղան «Մայրենիի ուսումնասիրման արդի խնդիրները դպրոցում» թեմայով.

* ուսուցիչներին իրազեկել ամբիոնի դասախոսների կողմից հրատարակված մեթոդական գրականությանը, դրանց նպատակներին, բովանդակությանը և կիրառության ոլորտներին.

* հանդիպել ավագ դպրոցի աշակերտների հետ՝ իրականացնելով մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն.

* դասեր լսել տարրական դասարաններում և կազմակերպել մեթոդական սեմինար:

Ըստ այս խնդիրների՝ ստեղծվեցին աշխատանքային խմբեր, որոնք աշխատեցին ուսուցիչների և բարձր դասարանների աշակերտների համապատասխան

խմբերի հետ:

Հանդիպումը ցանկալի ու սպասված էր թե՛ ամբիոնի դասախոսների, թե՛ ուսուցիչների, և թե՛ հատկապես աշակերտների համար: Գյուղի դպրոցը շատ տարբեր է քաղաքի դպրոցից. այն բոլորովին ինքնատիպ շունչ, ոգի ու մթնոլորտ ունի: Դասալսումների ժամանակ երեխաների անմիջականությունը, անկեղծ հուզումն ու ջերմությունը փոխանցվել էին մեծահասակներին և նրանց դարձրել իրենց դասի անմիջական մասնակիցները: Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանը ամփոփեց դասը՝ երեխաների օգնությամբ վեր հանելով Հովհաննես Թումանյանի «Անխելք մարդը» հեքիաթի գաղափարական բովանդակությունը, որի տիկնիկային բեմականացումը ներկայացրել էին երկրորդ դասարանի աշակերտները՝ մանկավարժի վարպետության դրսևորման ինքնաբուխ և հետաքրքրական օրինակ դառնալով ուսուցիչների ու դասախոսների համար:

Ուսուցիչների առաջարկությամբ քննարկվեցին նաև ներառական կրթությանն առնչվող մի շարք խնդիրներ, իսկ կլոր սեղանի շուրջ ուսուցիչներն ու աշակերտները ծանոթացան դասախոսների հեղինակած գրքերին, ուսումնաօժանդակ ձեռնարկներին:

Հանդիպումն արդյունավետ էր թե՛ ամբիոնի, թե՛ դպրոցի համար. առանձնացվեցին նաև այն թեմաները, որոնց շուրջ սեմինարներ ու քննարկումներ անցկացնելու նպատակահարմարություն ու կարիք է զգացվում, և պայմանավորվածություն ձեռք բերվեց մոտ ապագայում դրանց անցկացման վերաբերյալ:

Ամբիոնը մեծ սիրով դպրոցին նվիրեց վերջին մեկ տարվա ընթացքում դասախոսական կազմի հրատարակած մեթոդական տեսական, գործնական և ուսումնաօժանդակ նոր ձեռնարկները, որոնք կնպաստեն ուսուցիչների մասնագիտական որակի բարձրացմանը և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Մեթոդական նոր գրականության և հատկապես զննական պարագաների կարիք ուսուցիչը մշտապես ունի և այդ հարցում, կարծում ենք, օգնությունը պետք է շարունակական բնույթ կրի:

Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը որդեգրել է այն մոտեցումը, որ մանկավարժական բուհի կարևորագույն առաքելություններից մեկը պետք է լինի նաև գյուղական դպրոցների հետ մասնագիտական անմիջական շփումների ու համագործակցության համանման ձևաչափը, որը կարևոր է գյուղական դպրոցի կարիքները վեր հանելու, դրանց լուծմանն աջակցելու և գիտամեթոդական աշխատանքներն իրականացնելիս նաև այդ շատ կարևոր դաշտը հաշվի առնելու համար:

ՏՈՆԱԿԱՆ ՕՐՎԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Տոնական եռուզեռ էր տիրում Երևանի Գ. Ստեփանյանի անվան N 135 հիմնական դպրոցում. տարիներ շարունակ ավանդույթ դարձած «Ա» հնչյուն-տառի ուսուցման շնորհանդես-միջոցառումը իր շուրջն էր հավաքել շատերին… Առաջին դասարանցիներն իրենց դասվարների հետ երկար էին պատրաստվել այդ հիշարժան միջոցառմանը:

Հուզված էին՝ գիտակցելով օրվա խորհուրդը. Մեսրոպ Մաշտոցը այնպիսի հայրենանվեր գործ էր կատարել, որը հրաշքի էր նման: Նրա ստեղծած տառերը մեր ժողովրդի համար դարձել են գոյության, ինքնության հզոր միջոց:

Մանկական շուրթերից բխած բանաստեղծությունները, երգերն ու երաժշտությունն էլ կարծես ծոն էին մեսրոպյան այբուբենին…

«Ա» հնչյուն-տառի խորհրդանիշ հանդիսացող արևի, աղավնու, արջի, աղվեսի, արագիլի, առյուծի կերպարներ մարմնավորող մանուկները խաղաղություն, բարություն, հայրենասիրություն, լույս ու ջերմություն էին բարբառում…

Անսահման էր ոգևորությունը, որոնցով վարակվել էին փոքրիկները՝ այն փոխանցելով ներկաներին: Իսկ ներկաների շարքում էին դպրոցի կառավարման խորհրդի նախագահ Սեյրան Ավագյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանը, սիրված բանաստեղծ, մանկագիր Լիպարիտ Սարգսյանը, «Այբբենարան» դասագրքի հեղինակ Վաչագան Սարգսյանը, Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ տեր Նորայրը, որի օրհնանքի խոսքով էլ սկսվեց միջոցառումը:

Ելույթ ունեցողներն իրենց ողջույնի խոսքում կարևորեցին հայեցի դաստիարակության այն ճիշտ ճանապարհը, որն արժևորում է դպրոցի տնօրեն Գարեգին Ներսեսյանը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում:

Վեց առաջին դասարանների աշակերտներն (այս ուսումնական տարում 1-ին դասարան են ընդունվել 192 աշակերտ) իրենց ուսուցչուհիների հետ երդվեցին անաղարտ պահել ոսկեղենիկ մայրենին, իսկ դպրոցի ղեկավարության կողմից բաժանված գունավոր կավիճներով դասարաններում իրենց դողդոջուն ձեռքերով գրեցին հայոց այբուբենի առաջին տառը՝ Ա, ա…

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանը սահմանել է Ռուբեն Սևակի անվան ամենամյա մրցանակ: Մրցանակը՝ 1000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որը հովանավորում է բանաստեղծի եղբորորդին՝ բարերար Հովհաննես Չիլինգիրյանը:

Մրցանակի համար կարող են դիմել Մանկավարժական համալսարանի ուսանողները և բուհի Հենակետային (ավագ դպրոց) վարժարանի սաները՝ ներկայացնելով հայ բանաստեղծ, արձակագիր, բժիշկ Ռուբեն Սևակի (Չիլինկիրյան Ռուբեն Հովհաննեսի 1885-1915) մասին խոհագրություն (15-20 տպագրված էջերի սահմանում):

Ցանկացողները կարող են նյութերն ուղարկել մինչև 2019 թվականի փետրվարի 28-ը ներառյալ՝ info@aspu.am հասցեին, կամ ներկայացնել ՀՊՄՀ Քարտուղարություն (Տիգրան Մեծի 17, I հարկ, 104 աշխատասենյակ):

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 19.11. 2018 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ